

## ՀԱՆԴԵՍԻ ԱՒԱԳ ԱՒՈՒՐՅ

Եւ Աւագ շարթուն չարչու պազար կու  
կանդնի սուրբ Յարութեան առջևի մօյտանն .  
բայց ամէնն հոգեւոր բան ծախվի . որպէս ի  
140 Հում սուրբ Պետրոսի դուռն՝ ակնուանի , թէս-  
պէհնի . եւ աստ քուստիկ , խուշախ , դօտի եւ  
այլն :

Եւ Աւագ ուրբաթն մէխքամա խուրմիչ  
կ'անեն եւ Յարութեան դուռն պատ կու բո-  
145 լորեն . գայ շէխերուն մեծն եւ նստի . զատին ,  
չուպաչին , մեր Պարոնտէրն , մեծ թարծի-  
մանն եւ եասախչիք . ապա զան ամենայն ուխ-  
տաւորք ամենայն ազգաց . եւ տան չորսական  
ոսկի եւ մտնուն . եւ մինչ ի շարաթ իրիկուն  
150 գրվին . եւ Փախիր Փուխարան մնայ , թէ պա-  
կաս առնուն , զի առաթ է . բայց զի՞նչ շահ  
ունի որ մահրում կու մնան այն հոգեւոր բա-  
րեաց . զի առաջ գնացողքն ժ , ժԲ անգամ  
մտանեն թէնհայ եւ կատարեն զկամս :

155 Եւ նախ եկողքն աւագ հինգշարթին  
մտնան եւ զոտնլուան Յարութիւնն առ-  
նեն . եւ անտի ելեալ երթան ի Այրն ուր  
Քրիստոս աղօթէր . այլ եւ Լմբռնման  
տեղն . եւ անդ զգիշերն ի բուն հսկմամբ եւ  
160 աղօթիւք անցուցանեն . եւ յաւագ ուրբաթ զան

145 գա շէխերուն : — 159 անդր :

որ հանդիսագիրն իսկ եղած է . անոր հետեւելով տուած է նկարագրութիւնը P. L. Lemmens, Die Franziskaner im Heiligen Lande (1336—1551). Münster i. W. 1916, էջ 169, ըստ ամենայնի ձայնակից Սիմէոնի տողերուն :